



«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-196-30.11.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) առաջարկվող կարգավորումների վերաբերյալ նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) քննարկվող դրույթը փոփոխվել է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված ՀՕ-164-Ն օրենքով, որով նախատեսվել է հարկադիր ծառայողի վարչարարությանը պատճառված վնասը ԴԱՀԿ-ի ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին փոխհատուցելու վերաբերյալ կարգավորում: Այս մոտեցմամբ ամրագրվել ու ապահովվել են վարչական մարմինների կողմից վարչարարությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցում միասնականությունը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա ընկնող լրացուցիչ բեռի թեթևացումը:

2) ներկայացված օրենքի նախագծի դրույթները խնդրահարույց են օրենքի գործող կարգավորումների հետ համակարգային կիրառման, ինչպես նաև գործնական իրացման տեսանկյունից: Այսպես՝

ա. օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի վերջին պարբերության համաձայն՝ ֆոնդի միջոցների անբավարար լինելու դեպքում վարչարարությանը պատճառված վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին, որոնք հետագայում վերականգնվում են նույն ֆոնդի միջոցներից: Մինչդեռ, օրենքի նախագծով առաջարկվող մեխանիզմի պայմաններում, հարց է առաջանում ինչպե՞ս վարվել, եթե վարչա-

րարությանը պատճառված վնասը հատուցելու համար նախատեսված քսան տոկոսը բավարար չէ, և օրենքի մակարդակով հստակ ամրագրվում է յուրաքանչյուր ուղղության համար նախատեսված միջոցների հարաբերակցությունը:

Առաջացող հակասությունը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից, որի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները,

բ. ֆոնդում առկա միջոցների տեղաբաշխման հետ կապված հարաբերությունների՝ օրենքով հստակ ամրագրելու վերաբերյալ առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է նաև ճկունության տեսանկյունից՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Այսպես, հնարավոր են իրավիճակներ, երբ յուրաքանչյուր ուղղությամբ տվյալ տարվա անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը կազմելուց հետո անհրաժեշտություն առաջանա վերանայելու ըստ ուղղությունների տոկոսային հարաբերակցությունը՝ առաջացնելով օրենքում փոփոխության անհրաժեշտություն, դրանով իսկ խաթարելով ֆոնդի միջոցների տեղաբաշխման հետ կապված իրավահարաբերությունների բնականոն ընթացքը: Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ օրենքով որպես բաշխման ուղղություն նախատեսված է նաև վարչարարությամբ պատճառված վնասի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից հատկացված գումարների վերականգնումը, որի պարագայում անհնար է նախապես կանխատեսել և օրենքով սահմանել կոնկրետ սահմանաչափ: Նույնը վերաբերում է նաև օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով առաջարկվող դրույթին,

գ. պարզ չէ, թե ինչ սկզբունքով է նախատեսվել օրենքի նախագծով առաջարկվող տոկոսային հարաբերակցությունը, ինչի վերաբերյալ օրենքի նախագծին կից հիմնավորման մեջ ներկայացված չեն անհրաժեշտ տեղեկատվություն, ֆոնդի միջոցների տեղաբաշխման վերաբերյալ վիճակագրական տվյալներ և վերլուծություններ, ինչը հնարավորություն չի տալիս

գնահատելու առաջարկվող կարգավորման հիմնավորվածությունը և այլընտրանքային տարբերակներից հենց օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումն ընտրելու նպատակահարմարությունը:

Անփոփելով շարադրվածը, գտնում ենք, որ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը բավարար հիմնավորված չէ՝ գործող օրենսդրական դաշտի, առկա իրավական կարգավորումների, իրավական ակտում նախկինում կատարված փոփոխությունների և դրանց արդյունքների համեմատական վերլուծությունների հաշվառմամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի  
Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի ՀՕ-221 օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ  
մասի՝

1. 1-ին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությունն ունեցող նոր  
նախադասություններով.

«Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ  
համակարգի զարգացման ֆոնդում գոյացած միջոցների քառասուն տոկոսն  
օգտագործվում է համակարգի զարգացման եւ ծառայողների նյութական խրախուսման,  
քառասուն տոկոսը՝ կատարողական ծախսերի, քսան տոկոսը՝ հարկադիր կատարողի  
վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման համար:  
Հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի  
փոխհատուցման համար հատկացված միջոցների չօգտագործված մասը  
հավասարաչափ ուղղվում է կատարողական ծախսերի ու համակարգի զարգացման եւ  
ծառայողների նյութական խրախուսման համար:»:

2. 2-րդ պարբերությունից հանել «ինչպես նաեւ ծախսման այլ ուղղությունները» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

**1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դատական  
ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի  
զարգացման ֆոնդում գոյացած միջոցների բաշխման սահմանաչափերը եւ դրանց  
հարաբերակցությունը օրենքով ամրագրելու անհրաժեշտությամբ:

Ներկայիս գործող օրենքով ֆոնդում գոյացած միջոցների բաշխման սահմանաչափերը ամրագրված չեն, եւ այդ հարցը թողնված է կառավարության որոշման կարգավորմանը, ինչպիսի պայմաններում մենք կարող ենք ունենալ մի այնպիսի իրավիճակ, երբ հարկադիր կատարողի կողմից վարչարարության հետեւանքով պատճառված վնասը այնքան է, որ դրա փոխհատուցման արդյունքում միջոցներ չեն մնա մյուս ուղղություններին հատկացնելու համար, ինչի արդյունքում, իհարկե, կխաթարվի ԴԱՀԿ ծառայության բնականոն աշխատանքը:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Գտնում եմ, որ օրենքով սահմանված ֆոնդում գոյացած միջոցների բաշխվածությանը պետք է օրենքով տալ տոկոսային հարաբերակցություն՝ ըստ համապատասխան ուղղությունների (կատարողական ծախսեր, համակարգի զարգացման եւ ծառայողների նյութական խրախուսման միջոցներ, հարկադիր կատարողի ոչ իրավաչափ վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման միջոցներ): Դրանից հետո նոր միայն կառավարությունը պետք է որոշի ֆոնդում գոյացած ամբողջ միջոցների օգտագործման կարգը: Հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման համար հատկացվող միջոցներից խնայողություններ առաջանալու դեպքում, կառավարությունը իրավասու կլինի սահմանել այդ միջոցների օգտագործումը մյուս երկու ուղղությունների համար հավասարաչափ, ինչն էլ կապահովի ճկունություն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդում գոյացած միջոցները բաշխելու հարցում:

Անդրադառնալով միջոցներն այլ ուղղություններով ծախսելուն, պետք է փաստել, որ ֆոնդում գոյացած միջոցների օգտագործման ուղղությունները այնքան լայն են եւ ամբողջական, որ դրանց օգտագործման համար այլ ուղղություն սահմանելու կարիքը բացակայում է: Նույնիսկ՝ հետագայում նոր ուղղության կարիք առաջանալու դեպքում, վերջինս պետք է լինի հիմնավորված եւ սահմանվի օրենսդրական նախաձեռնության արդյունքում:

## **3. Ակնկալվող արդյունքը**

Օրենքով նման բաշխվածություն սահմանելով՝ կերաշխավորենք բոլոր ուղղությունների համար օգտագործվող միջոցների օպտիմալ հատկացումները եւ կբացառենք ֆոնդում գոյացած ուղղություններից որեւէ մեկի համար ամբողջական կամ մեծ մասի հատկացումը: Նման կերպ մենք կսահմանենք հարկադիր կատարողների նյութական խրախուսման, դատական ակտերի կատարման արդյունքում առաջացող ծախսերի (կատարողական ծախսերի) եւ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կայուն զարգացման համար՝ հատկացվելիք միջոցների երաշխավորված չափ՝ միաժամանակ ապահովելով հարկադիր կատարողների վարչարարության հետեւանքով պատճառված վնասների փոխհատուցումները:

Փորձից ելնելով՝ կարող եմ ասել, որ նման բաշխվածության սահմանումը կապահովի, որպեսզի ի սկզբանե բյուջետավորվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծախսերն ու եկամուտները, իսկ նման սահմանաչափերը ԴԱՀԿ ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցները համապատասխան ուղղություններով օգտագործելու ողջամիտ լուծումն է, որը հնարավորություն կտա այդ միջոցները արդարացիորեն եւ հնարավորինս համաչափ բաշխվածությամբ ուղղել ըստ նախատեսված ուղղությունների: